

Ծ Ն Ո Ւ Ն Պ Բ Բ Ի Ս Տ Ա Ս Ի Ը

Ձի ձուռ մեկ այսօր Փրկիչ, որ է թծեալ
Տէր, ի բազարի Գառնի Ղուկ. զր. Բ. 14:

Հրէաստանին ի Բէթղեհէմ քաղաք Պաւթի գերապանձ
Ելէք, որդիք Հօր Ազամայ, հոգեով պաշաւել զՏէր Աստուած.
Ար ի մնուր այրին դնի պատեալ յանշուք խանձարուր,
Թէ և նմին հանդերձ փառաց է անմատոյց լուսոյն հուր:

Ելէք, ի գիրկ մատաղ Աուսին իրրու ի գահ արքենի
Համրոյր Փրկչին տալ բոկ ոտիցն համրոյր ձեռացն սրբնի.
Ելէք, որհնել զգուշակեալն մարդկան ազգի զփրկութիւն —
Աննացն զբան, որ արդ ընու յոյրտա ամեն զցնծութիւն:

Ահա և քո լցաւ անսուտ բարբառ, ո՞վ սուրբ մարդարէ.
Էմեանուէլ ծնաւ Արդի մեկ հրաշագեղ ի կուտէ.
Ծնաւ, զի զմեկ ասեալ անցէ երկնից զուարթնոցն ի խորան,
Խորան փառաց երանաւէա կերտեալ յաջոյն աստուածեան:

Ծնաւ, այլ ո՞չ ի զեղազարդ ի տունս ահեղ կայսերաց,
Ար թագաւոր է համայնից թագաւորաց և Աստուած.
Ծնուեց անձառ՝ անհաս մտաց գուշակացն իսկ հոգելից,
Ի մութ խաւար պատի միտք իմ շիշխեն նմին կարգ ճասից:

Ոչ հրաշակերտ բազմի ի գահ վառեալ ականցն ի փաղփիւն,
Եւ ոչ ի գորգքս կերպասեալ կամ յոսկեթեղ բարձ փայլուն.
Այլ ի մարդն յարդ և ի խոտ. աղքատին կեանք հիասքանչ.
Թէպէտ անբաժ յաստուածայինն կայր և յայնժամ ի փառաց:

Նորա յաջմէ ցոռեկ եզին որո՞ճս աննոյր անգագար,
Եւ ի ձախմէ՞ էչ, աւանակ զլուխս ունին ի խոնարհ
Պափր և գոփիւն հանէր ոչխար, մոյլն գառնուկք ստոստեն,
Համայնք ի յայրն բերկրապատար զպար և զկաթն յաճախեն:

Պերանք մարդակք լոյս յանմահին, ո՞հ, հրաշագեղ ցոյցան,
Եւ քնարահար հեղեալ ի ներքս գուեղք երկնային զօրութեան,
Երգեն ի փասս մանկապելոյն և ի պատիւ սուրբ Աուսին.
Յարագուարձ տուն արքայից շիշխէր ի իննգ հէք այրին:

Լուր նորաքանչ նորա ծննդեան և հաս հոգուացն ի գասակ.
Հոփիւք զգաստք և բացթթեալք ի լոյս լուսնին զերուեակ.
Բերկրապատար ահա հրեշտակ ի լուսեթեան գիշերի.
Լնոյր բանիւք աւետար, ընոյր զնոցա սիրտ, զոգի:

« Գե՞տ աւետար ուրախութեան ձեզ մահացուացող համօրէն.
Ձի այսօր ձեզ ծնաւ Փրկիչ, ծնաւ Աստուածըն Ար Էն.
Ծնաւ Օծեալն յաւիտենից ի քաղաքի անդ Պաւթի,
Ամենազօր կեանք ձեր կենաց և փրկութիւն աշխարհի:

Ձեզ նշանակ. ի խանձարուրս մանուկ եղեալ ի մնուր: »
Ասաց. կշիռ երկնասլաց գործէր թեոցն հրափխտուր.
Ահա և զօրք երկնասլաց ընդ հրեշտակին ընդ այնմիկ,
Հեղան լցան դաշտին ի գոգ ձայնիւ երգոց կենսառիկ:

« Փա՞նք ի բարձունս Աստուծոյ խաղաղութիւն ի յերկրի,
Յաղգի մարդկան հաճութիւն Հօր: » նուագէին գուեղք երկնի:

Ընդ հրեշտակացն զոր ընծայեմ զաղաչաւոր օրհնութիւն՝
Իբրև զհունկըս հաճեաց ընկալ ի շնորհարաշխ հաճութիւն:

Ընդ հրեշտակացն և տիեզերք զարթեան ի նոր ալէլուս:
Փառք ի յերկինս, փառք ի յերկրի հնչեաց յԱստուած իմ Յիսուս:
Սիւզ երկնասիւզ ընդ Հրէաստան սուրայր բուրմամբ անուշիկ:
Յնծայր կայտուէր և Պաղեստին. յուրաս ամեն են բարիք:

Այլ ժիր հօլուացն ջեռեալք վառեալք ի հուր սիրոյ Անմահին,
Ոմն զգառնուկն առնու ի յուս, ոմն և զընտիրն ի հօտին,
Ի Բէթղեհէմ գտին զբանն, զոր նոյն ինքեանց կցոյց Տէր,
Փառք գոհութիւն նոցին հնչեաց ել բարձրացաւ յերկինս վեր:

Յապուշ հարան ընդ հրաշագեղ տիպ գիտակին անման.
Ճակատն յստակ և ձիւնափայլ շողայր իբրև զշուշան.
Պամարք յօնիցն երկնանման. ցոլայր յակունս հուր սիրոյն.
Եւ բոցանայր յայտան նորա թերթիկ կարմիր վարդենոյն:

Յապուշ հարան. զի այն Մանուկ չէր ի կանանց ծննդոց
Նման նմին չէր որ ի հոյս և հրեշտակացն անմարմնոց
Մանեան զի նա զարմն և զաւակ էր փրկագործն Արարչի.
Խոնարհ համրոյր տուեալ ոտիցն անկան նորա առաջի:

Յայնժամ և մոգք աստեղագէտք յարեւելեան սահմանաց, —
Արք անուանիք և աղցեալք հարստութեամբ մեծագանձ —
Տեսին զաստղ նորա յերկինս ի նոյն և կոյս գեղանի,
Մանուկ անբիծ հրաշատեսիլ, Մանուկ ի գիրկն սրբենի:

Ելին եկին յերկրէն Սարայ և Արաբայ ի Սաղիմ.
Երկրպագել անդ մանկացեալ նոր Արքային կուսածին,
«Ո՞ւր է, ասեն, արքայն Հրէից, որ ծնաւ, անգ Յակորեան,
Չաստղ նորա տեսաք աչօք յարեւելիցն ի խորան»:

Ընդ լուր բանիս սիրա Հերովդի խրոսովեցաւ մեծապէս,
Եւ վարանեալ քահանայից հարցումն առնէր ըզպէսպէս.
«Ի բէթղեհէմ, ասեն նորա, ծնունդ նորոյ Արքային
Ի վաղնջուց հոգիաշունչ գուշակք ազգիս երգեցին»:

Յայնժամ նա զազտ կոշեալ զմոգսն հասու լինէր երեման
Ժամանակի աստեղ, և զայս կարգայր նոցա պատուիրան.
«Գնացէք, ասէր, ստուգեցէք վասն մանկանն, ազգ և ինձ
Արասջիք զուք, և ես նմին երկրպագուի ունիմ իդձ»:

Իբրև լուան, գնացին. ահա նոյն և աստղ լուսալիր
Էջ առաջնորդ նոցա մինչև ի յարկ տան Տեառն կենսակիր,
Մտեալ ի ներքս տեսին զՅիսուս ի գիրկ Աուսին անձկալի,
Չօն պատարագ ետուն նմա կնդրուկ, զմուռս և զոսկի:

Ընդ չու մոգուցն՝ յաշխարհն իւրեանց, եղեալն աղղմամբ հրա-
շապէս
Չահի հարաւ ժանտն Հերովդէս յորժամ զպատրանս իւր ետես,
Չայրացաւ յոյժ հուր բարկութեան հուր և ցասմանն վեր ի վեր
Բորբոքեցաւ, և Բէթղեհէմ յարիւն մանկանց թաթաւեր:

Այլ մեր, որ արդ միահամուռ ի տաճարիս սրբութեան,
Ի մեղեդիս և յերգս անոյշ տօնեմք զտօն քո ծննդեան,
Աղաչեմք, Տէր, հայեաց ի մեր աչացն յաղի արտասուս.
Ի նոր ի կեանս ծնիր զմեզ, զքոց շնորհաց ծագեալ լոյս:

Տէր, որ իբրու ի գիրկ կուսին բազմիս ի սուրբ յայս սեղան,
Նիստ և ի մեր սիրա և յոգի զինչ ի զահոյս աստուածեան:

Ընկալ զաղօթս և զպաղատանս, և ծնողից քո ի սէր,
Կեանս ի կենացդ տուր Հայորդեաց և Հայրենեաց մեր աւեր:

Հաճեաց ընդ մեր իղձ և ընդ ուխտ, Էջ առ մեզ, ճ՛վ բարերար,
Հար, խորտակեա՛ զատելութիւն, Տուր սէր սիրոյդ մաքրօփայլ:
Չայն տուր, կոչեա՛ զվայրատեալս ի սուրբ փարօխ միութեան,
Զի ծագեցի յերկնից կամար մեզ նոր Արփի փրկութեան:

Օ՛ն, և ընկալ զիմ՝ երգ տկար, զոր երգեաց սիրտ վշտամեա
Յիւրն ի քնար յոգնատխուր պատեալ ի մութ և յստուեր:
Ընկալ, և զշիթ հեղ քոց՝ շնորհաց ի հոգի իմ՝ մեղսամած:
Զի թէ դու յիս, ահա՛ ես սուրբ յամենայնի եմ, Աստուած:

Յովսէփ Վարդապետ Փինաչեանց:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԵԱՆ, ԱՐՀԵՍՏԻ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԼԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ:

(ԵՐԵՆԻՆԻ ԵՒ ՎԵՐՉ. ԽԵ՝ ԳԵԼՄԵՐԵԼԻ ԿՈՄԻՏԵՐԻՆԻ) .

- 1811 Լօնդօնում ընդունվումէ գաղափարն լուսաւորութիւնը՝
Նոյնը Պարիզում 1815 ին:
- 1814 Կարլսրուհէում հիմնվումէ Ինժիներական դպրոց, որը
1825 փոխվումէ բազմարուեստեան դպրոցի:
- 1814 Հոգիի մամուլով առաջին անգամ տպվումէ «Տայմզ», Լօնդօ-
նում:
- 1814 Նապօլէօնի անկմամբ վերջանում է ցամաքային արգե-
լանքը. յետ վերջնական խաղաղութեան՝ վերակենդանանումէ
երկրագործութիւնը, նաւագնացութիւնը և վաճառականութիւնը.
բայց շուտով լինումէ զանազան ուղղութիւններով յետադիմու-
թիւն ևս. դարձեալ ներմուծումեն մաքսային գրութիւնը Եւրոպոյի
զանազան երկրներում, որոյ առթիւ փոխադարձ հաղորդակցու-
թիւն ու յարաբերութիւնը դժուարանումէ ծանր մաքսաուութեան
աղաղաւ:
- 1815 Հումֆրի Գաւին հնարումէ ապահովիչ լապտերը:
- 1815 Անգլիան վերցնումէ «կօրնրիլ» կոչուած հրամանագիրը, որով
հացաբոյսերի ներս բերելը խտաւ արգելվումէր, քանի որ ցորենի
մի որոշ չափը 80 շիլինգ արժէր. և փոխարէնը զրվումէ մի նոր
արգելիչ կանոն, որով ներս բերած հացաբոյսերի վրայ զրվումէ մի
այնպիսի մաքս, որ համապատասխան լինի հրապարակի գնին: Այս
վերջինն էլ 1846 ին վերցուեց և ներս բերելը (հացատեսակների)
ազատ եղաւ Անգլիայում: